բարօժարը և որպիսի տղայական պայման է առաջարկում պ. Արծրունուն,—թէ միայն այն ժամանակը մեղա կը գայ նա, երբ պ. Արծրունին պարզ փաստերով կապացուցանէ նրան „Մշակի" 177 համարում առաջնորդող յօդուածի մէջ յիշած մեղադրական խօսքերը դէպի „Մեղուի" խմբագիրը:

Այստեղ աւելորդ չեմ համարում կարգաւ դասաւորել պ. Սիմէօնեանցի պահանջները, որպէս զի ընթերցողները աւելի պարզ կարողանան տեսնել, թէ որքան անմիտ և խայտառակ պահանջներ է արել այդ վերջինը իր խաւար լրագրի ընթերցողների աչքերում թոզ փչելու նպատակաւ և ցոյց տալու նրանց թէ՝ ինքը չէ յիշաշրջում ճշմարտութիւնը, այլ „Մշակը":

„Մեղուն" նախ՝ պահանջում էր, որ ամեն մարդ յայտնէ իր կարծիքը և համակրութիւնը երկու լրագրի քարոզած մտքերին, ուղարկելով իր ստորագրութիւնը սրան կամ միւսին. երկրորդ՝ „Մեղուն" հրապարակաւ յայտնեց թէ „Մշակի" թղթակցութիւնները, որոնցով յայտնում են թղթակիցները իրանց համակրութիւնը վերջինի քարոզած մտքերին, բոլորն էլ կեղծ են և շինվում են իսկ և „Մշակի" խմբագրատան մէջ. եթէ դրանք կեղծ չեն, թող յայտնեն նրանց ազգանունները, այն ժամանակ մենք կը հաւատանք որ „Մշակի" քարոզած գաղափարները ժամանակակից են և աւելի արձագանք են գտնում, քան թէ մերը. երրորդ՝ երբ „Մշակի" թղթակիցները այս պահանջը եւս յագեցրին, նորից պ. Սիմէօնեանցը յանդգնում առաջնորդող յօդուածի մէջ ոգէտ և տալ անուանել այդ վերջիններին, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ նրանցից շատերը երբէք „Մեղուի" բաժանորդ չեն եղել կամ՝ բոլորովին չեն ծանօթացել նրա ուղղութեան հետ („Մեղու" 79 №): Այս անմիտ և անփաստ մեղադրանքներին մենք կը պատասխանենք այսպէս. թէ որպիսի տարօրինակ մարդ պիտի լինի „Մշակի" այն թղթակիցը, որ երբէք կարդացած չը լինելով „Մեղուի" համարները, մի այլ լրագրի միջոցաւ յայտնէ իր կարծիքը և խիստ վճիռը նրա տղայամիտ քարոզութիւնների և արած խարդախութիւնների մասին. կամ որքան անագնդութիւն և անբարոյականութիւն է պ. Սիմէօնեանցի կողմից յանդգնել յայտնել այն միտքը թէ՝ թէև շատերը կարդում են „Մեղուն", այնուամենայնիւ չեն կարողանում ծանօթանալ նրա ուղղութեան հետ (փառք և պատիւ պ. Սիմէօնեանցին, որ այնպիսի տարօրինակ ուղղութիւն է տւել իր լրագրին, որ կարդացողը անկարող է ծանօթանալ նրա ուղղութեան հետ), մինչդեռ ինքը կարդալով որ և է թղթակցի երկու կամ երեք թղթակցութիւնները, կարողանում է ծանօթանալ նրա գիտութեան և զարգացման հետ (Արդեօք լաւ ծանօթացել էք, պ. Սիմէօնեանց, Ղազար Տէր-Ղազարեանցի և Գնունու գիտութեան և զարգացման աստիճանի հետ. եթէ չէք ծանօթացել, կը խնդրէինք ծանօթանալ): Այդ ի՞նչ գիւտնական շնորհ է մտել ձեր գլխի մէջ, պ. Սիմէօնեանց, որից զուրկ են մնացել հասարակ մահկանացուները... Գուցէ այն է պատճառը, որ դուք „Մեղուի" խմբագիրն էք... Հաւատացէք, ցաւում ենք, որ ընդամենը երկու երեք հայ լրագիրներ ունենք, այն էլ դժբաղդաբար երկուսի խմբագիրները դուք էք և բաղմահիւլոմ պ. Բաբաջանեանցը, որ երկուսդ էլ լրագրական ազնիւ խօսքը ձեր չար կրքերին էք ծառայեցնում, ձեր հակառակորդներին, ձեզ բարի խորհուրդ տըւողներին վէրք տալու զէնք էք շինել ձեր ձեռին, այն ինչ ամեն մի լուսաւորված ազգերի մէջ նա ծառայում է միայն հասարակական ցաւերը երևան հանելու և նրանց դարմանելու համար...Ի՞նչն էր ստիպում պ. Վ. Բաբաջանեանցին գոնէ գուռ ընկնել, սրան նրան աղաչել, խնդրել, որպէս զի կարողանայ իր խմբագրութեամբ մի լրագիր հրատարակել: Ազգի և հասարակութեան օգտին ծառայելու, նրանց վէրքերը դարմանելու, լուսաւորութեան և բարեկեցութեան սերմեր ցանելու, թէ միայն փառութիւնը ճակատին ստաղ պ. Ռէգնաշալեանցին ամենապղտոր միջոցներով և ձեւերով վիրաւորելու, պախարակելու, զրպարտելու համար...կրկնում ենք—ի՞նչն էր պատճառը...

Գ. Սիմէօնեանց, եթէ սա կիրք չէ, հապա ի՞նչ է, որ ձեր նամակի վերնագիրը այսպէս էք գրում—„Բաց նամակ պ. Գ. Արծրունուն՝ „Մշակի խմբագրին": Ասացէք խնդրեմ, եթէ ձեր նպատակն է Արծրունուն դիմել, ինչ հարկաւորութիւն կար աւելացնել եւ „Մշակի խմբագրին". միթէ պ. Արծրունին առանց դրան չէր հասկանայ, որ նրան էք դիմում, այն ինչ դուք կարողանում էք հասկանալ որ ձեզ են դիմում, երբ խորհրդաւոր մըտքով են լինում գրված „Մշակի" առաջնորդող յօդուածները: Արդեօք այդ նամակը գրելու ժամանակ ո՞վ է ձեզ առաջնորդ եղել՝ ձեր կիրքը, թէ ուղեղը. բայց մենք այնքանը գիտենք, որ երբ մարդուս կիրքը առաջ է գալիս, նրա ուղեղը խեղագար դրութեան մէջ է գտնվում...

Գ. Սիմէօնեանց, էլ ի՞նչ հարկաւորութիւն կայ պահանջել պ. Արծրունուց փաստերով ապացուցանել իր առաջնորդող յօդուածի մէջ դէպի ձեզ արած մեղադրանքները—այն էլ փաստերը առաջ բերած լինեն „Մեղուից", ոչելով №-ը, յօդուածը և մինչև անգամ խօսքերը չակերտներով. միթէ դուք չը գիտէք որ ամեն մի ձեր գլխին թափած մեղադրանքը հիմնված են լինում „Մեղուի" միջից դուրս բերած փաստերի վրա. եթէ այդ չը գիտէք, խորհուրդ կը տայինք ձեզ նորից վեր առնել „Մեղուի" և „Մշակի" համարները և կարդալ. էլ ի՞նչ զուր ժամանակ և ջանք կորցնել է հարկաւոր արդէն փաստերով ապացուցածները նորից ապացուցանել... Ինչպէս երեւում է շատ գեղեցիկ ըմբռնել էք Թիւրքիայի խարդախ քաղաքականութիւնը և հետեւում նրան... Բայց մենք չենք կարծում, թէ պ. Արծրունին, թողնելով իր ազգօգուտ ծառայութիւնները, զուր ժամանակ կորցնէ ձեր խարդախ պահանջների համար, քանի որ հասարակութեան մեծ մասը, մինչև անգամ հազիւ գրել և կարդալ իմացողը լաւ է հասկացել „Մեղուի" ննգութիւնը, որ պատահում են մինչև անգամ այնպիսի դէպքեր, որ մի տեղ կուտած լինելով լրագիրների համարներ, հարցնում է հազիւ գրել և կարդալ իմացողը—թէ „էս ի՞նչ լրագիր է, „Մշա՞կ" է", բայց երբ ձեռքն առած համարը տեսնում է որ "Մեղու" է, այսպէս է արտայայտում իր տրամադրութիւնը. „Վա՜յ...էս էն ձանձրութիւնն է...Թող լաւ իմանայ „Մեղուի" պատուելի խմբագիրը, որ ահա 1880 թիւը լրանում է և 1881 թուին կիսի չափ պակասած կը լինի նրա բաժանորդների թիւը, եթէ նախընթաց տարիների նման ամեն մի քաղաքում խնդրանօք չը դիմի այս կամ այն ծանօթներին „Մեղուի" համար բաժանորդ գտնելու և այս վերջինը թէ խաթրով և թէ զոռով չը շատացնի բաժանորդների թիւը: Վերջացնելով նամակս, բարեկամի խորհուրդ կը տայինք „Մեղուի" խմբագրին փոխանակ մեղայ գալ իր արած խարդախութիւնների մասին և պարապել աւելի ազգօգուտ գործերով, հեռացնելով իրանից ամեն թշնամութիւն, ամեն հակառակութիւն:

Սմբ. Պարսամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 4 նոյեմբերի

Հայկական թատրոնի համար բէցէնզիա գրողները օր ըստ օրէ աւելանում են, միջին թուով եթէ հաշուենք, դերասաններուն իւրաքանչիւրին մէկ մէկ բէցէնզիա գրող կընկնի, այնպէս որ, եթէ դերասանական խումբը այսօր հրաժարվի, բէցէնզիա գրողները դերասաններուն տեղը կարող են բռնել, դժբախտաբար գեղեցիկ սեռէն թատրոնի համար բէցէնզիա գրողներ չունենք, ի հարկին սորա եւս դերասանուհիներուն կը յաջորդէին:

Անցեալ տարի խնիրուս կար, այս տարի խնիրուս ծնաւ զԲատուլ, Բատուլ ծնաւ զերիս աստեղս, բանը մնաց գիտաւոր աստղին, ո գիտէ երբ պիտի դուրս գայ իր խորհրդաւոր պոչովը:

Բէցէնզիա գրելու ժամանակ նախ եւ առաջ անհրաժեշտ հարկաւոր է ֆրանսերէն բառեր գործածել, ապա թէ ոչ chique չի լինի, որովհետեւ առանց ֆրանսերէն բառերու որ եւ իցէ մի կրիտիկա այնքան influence եւ impression չէ կարող ունենալ. որքան ֆրանսերէն expression-ներով մի գրուածքի կարող է inspiration ներանել, բեց օրէն տնդղիրերէնով խառն բէցէնզիա էլ դուրս կը գայ, վերջապէս բանը այն տեղ կը հասնի, որ բէցէնզիան բաբիլոնի խառնակութիւն կը դառնայ, արդէն կիսով չափ դարձած է:

Օրինաւոր եւ արդարագատ բէցէնզիա բեմական թերութիւնները կուզէ, նպատակը բարի է, բաւական է, որ այդ նպատակաւ գրվի, թերութիւն կայ, որ ուղղվելու հնարը կայ. զորօրինակ: Օրիորդ Սիրանուշին ունեցած բեմական յատկութիւնները եւ բնական ձեւերը գովելի են, բայց չափազանց արագախօս է, բեմի վրայ արտասանած պարբերութեանց հազիւ հազ հարիւրին բանը հասկացվում է, մնացածը զօրութեամբ հասկանալու է: Ահաւասիկ այս տեսակ պակասութիւնը առժամանակեայ է, դերասանին կամ դերասանուհուն կամքէն կախում ունի, ո՛ր ժամանակ կամենայ կուղղէ, իսկ բեմի յարմար բնական ձայն չունեցող դերասաններուն համար հազարներով բէցէնզիա գրվի, դարձեալ անուղղելի է, ձայներնին չի փոխվիր, ինչպէս որ անցեալ գիշեր տեսանք «Աւազակներ» ներկայացման մէջ Կարլ խմբապետի հպատակ աւազակներէն շատերը մուկի եւ կատուի ձայներ հանեցին: Ճշմարիտը ասելով այն գիշեր պ. Մնակեանը սաստիկ յուսահատված էր երեւում այդ խառնափնթոր ընկերներուն հետ դեր կատարելու ժամանակ:

Գանք պ. Ադամեանին: Կեղծաւոր, խորամանկ, խարդախ, նենգաւոր. վատ, մատնիչ, ստախօս, ցած. կեղտոտ, վախկոտ, զզուելի. մթով բանիւ հայկական բառարանի մէջ որքան սոցա նման իմաստ ունեցող բառեր կան. զամենը իր մէջ պարունակող տարօրինակ, ճիւաղական մի հրէշի ճշմարիտ պատկերը ներկայացուց. այն էր Ֆրանցի դերը. ոչ թէ միայն դերասանութեան, այլ եւ երեսին դծագրութիւնը ըստ պահանջման հարկին այլափոխելու արհեստին մէջ էլ այդ տղան արթիւն է:

Տիրոնի Դանիէլ դռնապանը (պ. Տէր-Դաւթեանցը) շատ բնական էր իր հաւատարիմ ծառայի մի երկիւղածութեամբը, նմանապէս ծեր զուրբը (պ. Սաֆրազեանցը) լաւ կատարեց իր դերը, որ վերջինը ընդունակութիւն ունի եւ փայլուն ապագայ կը խոստանայ, եթէ փոքր ինչ քաջալերենք: Պ. Սաֆրազեանցին այն գիշեր զիջուցածաւ մի ստանդակութիւնը տեսայ, չի գիտեմ թէ ուրիշ տեսնողներ եղա՞ն, թէ ո՛չ. Երբ ինքը կարլէն սպանվեցաւ եւ կռնակի վրա բազկատարած պառկած էր, նոյն միջոցին Ամալիային էլ սպանվելուն կարգը եկաւ. բայց որովհետեւ պ. Սաֆրազեանցի տեղրուն կողմը մի փայտէ դիվան կար, երբ Ամալիան էլ սպանվեցաւ, գետինը ընկնելու համար բաւական տեղ չը կար, ուստի հեռատես պ. Սաֆրազեանցը, որ արդէն մեռած էր, նոյն վայրկենին ամենայն զգուշութեամբ կամաց մը աջ ձեռքը քաշեց, որպէս զի Ամալիային էլ տեղ բացվի մեռնելու համար, եթէ Ամալիային տեղը նեղ լինէր, (քիչ մը տեղ բաց արա, ես էլ պիտի մեռնեմ) կասէր:

Նամակս վերջացուցած րոպէիս լսեցի, որ պ. Մնակեանը փախել է, եթէ ճշմարիտ է, հազար ափսոս, բէցէնզիայի մի նիւթ պակսեցաւ:

Կրօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրները լի են եւրոպական Ռուսաստանի մի քանի նահանգների մէջ թանգութեան եւ մինչեւ անգամ սովի նկարագրութեամբ: Մի քանի գաւառներում ժողովուրդը հացի տեղ թեփ է ուտում, ուրիշ տեղ խոտերով, օրինակ լէբեդա ասված խոտով է կերակրվում:

—

Լրագիրները հաղորդում են, որ լուսաւորութեան մինիստրութիւնը դիտաւորութիւն ունէր կրկին մտցնել համալսարանի ուսանողների մէջ ֆորմա, այսինքն համազգեստներ: Բայց այժմ հաղորդում են, որ համազգեստներ չեն մտցնվի, այլ ուսանողները կը կրեն իրանց կուրծքի վրա մի առանձին նշան:

—

Նորերս Ս. Պետերբուրգի մի հայ երիտասարդ պատահելով մայրաքաղաքի մի այլ հայ երիտասարդին, որ յայտնի է արդէն հայոց հասարակութեանը իր աշխատութիւններով թէ հայոց եւ թէ ռուսաց մամուլի մէջ, ասում է նորան: «Բարեկամ, պարտաւորութիւն եմ համարում զգուշացնել քեզ այն վտանգից, որ այսուհետեւ քեզ ամեն րոպէ սպառնում է. մի այստեղի բուրմի դէմ տպվածները քեզ վերագրելով, յիշեալ բուրմը այնքան կատաղած է քո դէմ, ասելով թէ այդ տեսակ յօդուածները պէտք է վնասեն նրա պաշտօնական կարիէրին, որ այսուհետեւ ոչինչ ջանք եւ միջոց խնայելու չէ քեզ վնասելու եւ վրէժխնդիր լինելու քեզանից: Ի հարկէ վնասելու միջոցը կը լինի կառավարութեան առջեւ մատնութիւններ քո մասին, նոյնը ինչ որ անում են Կատկովներ, Դոստոեվսկիներ, Լիւբիմովներ եւ սրանց պէս մարդիկ:» Մեր երիտասարդը, վախկոտներից չը լինելով, ի հարկէ ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում իր բարեկամի ասած խօսքերին: Բայց մենք, ճանաչելով Ս. Պետերբուրգում ապրող մի բուրմի հայոց ազգին տարիներով հասցրած անփոխարինելի չարիքները, շատ լաւ իմանալով տարիների փորձերից այն կործանիչ դերը, որ խաղում էր այդ բուրմը մայրաքաղաքում պաշտօն վարելով հայ ուսանողների եւ հայ հասարակութեան վերաբերութեամբ, հաւատում ենք, որ նա ընդունակ է ամեն րոպէ վնասել յիշեալ երիտասարդին, որ ամենակարճ ժամանակում նշանակութիւն ստացաւ գրականութեան մէջ հայոց խնդրի վերաբերութեամբ: Եռանդոտ եւ գործունեայ անձնաւորութիւնները միշտ աչքի փուշ են եղած մեր բուրմի համար, նրան ատելի են եղել Նալբանդեանց, Միանսարեանց, Նազարեանց: Հերիք է որչափ զոհեր են բերված մոլեռանդութիւններին, որ արած են միմիայն անձնական կարիէրի մէջ բարձրանալու նպատակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Փարիզից „Polit. Corresp." լրագրին նոյեմբերի 4-ից գրում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը շուտ շուտ է քննում իր նաւատորմի յետ կանչելու հարցը արեւելեան ջրերից: Ֆրանսիական մինիստրների խորհուրդի ժամանակ մի քանի անդամները պահանջում էին անյապաղ յետ կանչել Ֆրանսիական նաւատորմը և չը սպասել Դուլցինիօի հարցի վերջանալուն. խորհուրդի այդ անդամների կարծիքով նաւատորմի յետ կանչելը պէտք է կախումն չունենայ այն դրութենից, որ կը բռնեն միւս պետութիւնները: Նոյն լրագրին Ցետինեից գրում են, որ այդ քաղաքի մէջ գտնվող օտար պետութիւնների հաւատարմատարների մեծամասնութիւնը պատրաստվում է մասամբ Ռագուզա տեղափոխվել և մասամբ արձակուրդ խնդրել և հեռանալ.

Լոնդոնի մէջ հրատարակվող „Times" լրագրին հեռագրում են Ցետինեից նոյեմբերի 3-ից: Դերվիշ-փաշայի Դուլցինիօ գալու լուրը դեռ ևս չէ հաստատվել. Ընդհակառակը Թիւրքաց զօրքերը ալբանական միութեան անդամների օգնութեամբ շրջապատել են ալբանական երկիրը և վըրանդաւոր են դարձրել հաղորդակցու-